

Երևանի քաղաքապետի 2011 թվականի մարտի 22-ի N 899-Ն որոշման համաձայն Երևանի Աջափնյակ, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերը հայտարարում են մրցույթ ստորև թվարկված Երևան քաղաքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) համար:

h/h	Համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը	Մրցույթ անցկացնելու օրը և ժամը
	<b>Երևանի Աջափնյակ վարչական շրջան</b>	
1	«Երևանի հ.48 մանկապարտեզ» ՀՈԱԿ	22.05.2018թ. Ժամը՝10.00
2	«Երևանի հ.49 մանկապարտեզ» ՀՈԱԿ	
3	«Երևանի Մ.Միրզոյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	
4	««Զարթոնք» մանկական գեղարվեստական դաստիարակության կենտրոն» ՀՈԱԿ	
	<b>Երևանի Դավթաշեն վարչական շրջան</b>	
5	«Երևանի հ.60 մանկապարտեզ» ՀՈԱԿ	22.05.2018թ. Ժամը՝11.00
6	«Ավետ Տերտերյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ	
	<b>Երևանի Էրեբունի վարչական շրջան</b>	
7	«Երևանի հ. 67 մանկապարտեզ» ՀՈԱԿ	22.05.2018թ. Ժամը՝12.00
8	«Երևանի հ. 68 մանկապարտեզ» ՀՈԱԿ	
	<b>Երևանի Կենտրոն վարչական շրջան</b>	
9	«Երևանի հ.17 մանկապարտեզ» ՀՈԱԿ	22.05.2018թ. Ժամը՝15.00
	<b>Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան</b>	
10	«Երևանի հ.87 մանկապարտեզ» ՀՈԱԿ	22.05.2018թ. Ժամը՝9.00
	<b>Երևանի Նոր Նորք վարչական շրջան</b>	
11	«Երևանի հ.120 մանկապարտեզ» ՀՈԱԿ	22.05.2018թ. Ժամը՝16.00
	<b>Երևանի Նորք -Մարաշ վարչական շրջան</b>	
12	«Երևանի Նորք-Մարաշի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	22.05.2018թ. Ժամը՝13.00
	<b>Երևանի Շենգավիթ վարչական շրջան</b>	
13	«Երևանի հ.127 մանկապարտեզ» ՀՈԱԿ	22.05.2018թ. Ժամը՝14.00
14	«Երևանի հ.137 մանկապարտեզ» ՀՈԱԿ	
	<b>Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան</b>	
15	«Երևանի հ.152 մանկապարտեզ» ՀՈԱԿ	22.05.2018թ. Ժամը՝17.00

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն վերը թվարկված պաշտոններն զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, գրական հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության գործունակ, չափահաս քաղաքացիները:

**Երևան քաղաքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների (այսուհետ՝ Տնօրենների) ընտրության պարտադիր պայմաններն են՝**

- Բարձրագույն կրթություն
- վերջին տասը տարվա ընթացքում առնվազն 2 տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ.
- իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Մահմանադրություն, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք, Տնօրենի լիազորությունների շրջանակներին առնչվող համապատասխան ոլորտի օրենսդրություն, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, Հարկային օրենսդրություն, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք և այլ իրավական ակտեր).
- կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգ, հիմնադրույթներ մշակելու կարողություն

**Տնօրենի ընտրության (նշանակման) լրացուցիչ պայմաններն են՝**

- 1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- 2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.
- 3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- 4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն (տնօրենի պարտականություններն ամբողջական նկարագրված է տվյալ կազմակերպության կանոնադրությունում).
- 5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.
- 6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի հ.416-Ն հրամանով հաստատված հավելվածի 2-րդ բաժնի 2-րդ կետով նախադրոցական ուսումնական հաստատության Տնօրենի պաշտոնը զբաղեցնողին ներկայացվում են այլ անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ընդհանրական պահանջներ:

\* \* \*

Դիմող անձինք մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- 1) դիմում.
- 2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.
- 3) քաղվածք աշխատանքային գրքույկից.
- 4) ինքնակենսագրություն.
- 5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.
- 6) կադրերի հաշվառման անձնական թերթիկ (լրացված).
- 7) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.
- 8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում).
- 9) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել):

Անձը մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացիներն ապահովվում են թեստային առաջադրանքներով:

Ընդունել ի գիտություն, որ Տնօրենների թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթներն անցկացվելու են Երևանի քաղաքապետարանի շենքում (Արգիշտի 1) ժամանակացույցով նախատեսված օրերին և ժամերին:

Փաստաթղթերն ընդունվում են Երևանի այն վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի ընդհանուր բաժիններում, որի վարչական տարածքում գտնվում է տվյալ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը՝ ամեն օր՝ աշխատանքային օրվա ընթացքում՝ ժամը՝ 10.00-ից 17.00-ն (ընդմիջում՝ 13.00 – 14.00), բացի շաբաթ և կիրակի օրերից, հետևյալ հասցեներում՝

1. Աջափնյակ՝ Արա Սարգսյան 5, հեռախոս (011) 51-80-54.
2. Դավթաշեն՝ Դավթաշեն 3-րդ թաղամաս, հեռախոս (011) 51-82-81.
3. Էրեբունի՝ Սասունցի Դավթի 87, հեռախոս (011) 51-83-31.
4. Կենտրոն՝ Տերյան 44, հեռախոս (011) 51-84-63
5. Մալաթիա-Մեքաստիա՝ Մեքաստիա 32, հեռախոս (011) 51-85-92.
6. Նոր Նորք՝ Գայի 19, հեռախոս (011) 51-86-07.
7. Նորք-Մարաշ՝ Ա.Արմենակյան 272, հեռախոս (011) 51-87-08.
8. Շենգավիթ՝ Գ.Նժդեհի 26, հեռախոս (011) 51-88-11.
9. Քանաքեռ-Զեյթուն՝ Դավիթ Անհաղթ 11, հեռախոս (011) 51-88-63

Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է՝ 14.05.2018թ.: